

քրիստոնեայ արենակիցներուն (8) :

Այս անտանելի կացութենէն ազատելու համար միշտ աւելի կը զօրանար ազգային անկախութեան տենչանքը, որ հրահրուած էր Ղարաբաղի հայ մելիքներու եւ մանաւանդ կաթողիկէ քարոզիչներու միջոցաւ :

Հայ բարձր կղերն եւ աշխարհական Աւագանին քաղաքական ձերբազատում մը կը յուսային մանաւանդ Ֆրանսայի միջոցաւ :

Այս ակնկալութեամբ խանդավառօրէն կ'ընդունէին Լուսավիկոս ԺԴ. Թագաւորին գործակալները : 1665ին Երեւան կը հասնէին Ֆրանսացի երկու ճանապարհորդներ, Տը Լալան եւ Տը Լա Պուլլէ Լը Գուլլ : Ասոնք Մայիս 20ին Թագաւորին ուղղուած նամակով մը կը նկարագրէին իրենց ճամբորդութիւնը Կարինէն Երեւան, եւ կ'ըսէին. «Դըլեակին, ինչպէս նաեւ քաղաքին մէջ, կ'ապրի հայոց բազմութիւն մը, եւ ամէնքը, (ինչպէս անոնք, զորս տեսանք՝ թէ կը հեծեն Թուրքիոյ մէջ Օսմանեան Բռնակալութեան ներքեւ), ամէն օր կը սպասեն իրենց թշուառութեան վերջ գտնելուն, շնորհիւ յաղթական զէնքերուն Ձերդ Վեհափառութեան, որուն մեծութիւնն ու կարողութիւնը կը ճանչնան անոնք» : Ճանապարհորդները կը յայտարարէին նաեւ՝ թէ հայերը Ֆրանսայի Թագաւորը պիտի ընդունէին իբրեւ իրենց ազատարարն եւ հովանաւորն իրենց ե-

(8) Հայրեմիք Ամսագիր. Անդ էջ 89, 90, 110 :